# Իրավասություններ ժողովրդավարական մշակույթի համար

## Ապրել միասին, ինչպես հավասարը հավասարի հետ, մշակութապես տարբեր ժողովրդավարական հասարակություններում

Համառոտ բովանդակություն

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

# Իրավասություններ ժողովրդավարական մշակույթի համար

## Ապրել միասին, ինչպես հավասարը հավասարի հետ, մշակութապես տարբեր ժողովրդավարական հասարակություններում

### Համառոտ բովանդակություն

Եվրոպայի խորհուրդը

*The opinions expressed in this work are the responsibility of the authors and do not necessarily reflect the official policy of the Council of Europe.*

All requests concerning the reproduction or translation of all or part of the document should be addressed to the Directorate of Communication (F-67075 Strasbourg Cedex or publishing@coe.int).

Cover photo: © Shutterstock
Cover design: Documents and Publications Production Department (SPDP), Council of Europe

Layout: Documents and Publications Production Department (SPDP), Council of Europe

Council of Europe Publishing
F-67075 Strasbourg Cedex
http://book.coe.int

© Council of Europe, December 2016
Printed at the Council of Europe

# Համառոտ բովանդակություն

Այս փաստաթուղթը նկարագրում է իրավասությունների այն հայեցակարգային մոդելը, որին պետք է ծանոթ լինեն անձինք, ովքեր ցանկանում են արդյունավետ կերպով իրենց մասնակցությունն ունենալ ժողովրդավարության մշակույթում և մյուսների հետ միասին խաղաղ ապրել մշակութապես բազմազան ժողովրդավարական հասարակություններում: Նախատեսվում է, որ այդ մոդելը կօգտագործվի տեղեկացնելու կրթական որոշումների կայացման և պլանավորման, կրթական համակարգերին օգնելու համար, որի նպատակն է նախապատրաստել սովորողներին ապրելու որպես իրավազոր ժողովրդավարական քաղաքացիներ:

Փաստաթուղթը բաժանված է 7 մասի:

1-ին մասում շարադրված է իրավասության մոդելի կրթական նպատակը: Այս մասում նաև բացատրվում է, թե ինչու է այս համատեքստում օգտագործվում <<ժողովրդավարության մշակույթ>> դարձվածքը, այլ ոչ <<ժողովրդավարություն>> դա արվում է ընդգծելու համար այն փաստը, որ թեև ժողովրդավարությունը չի կարող գոյություն ունենալ առանց ժողովրդավարական հաստատությունների և օրենքների, այնուհանդերձ այդ հաստատություններն ու օրենքները գործնականում չեն կարող աշխատել առանց իրենց հիմքում ունենալով ժողովրդավարության մշակույթ, այն է՝ ժողովրդավարական արժեքներ, վերաբերմունք և գործելակերպ: 1 - ին մասը բացատրում է նաև մշակութային բազմազանություն ունեցող հասարակություններում ժողովրդավարության մշակույթի և միջմշակութային երկխոսության միջև եղած փոխկախվածությունը նման հասարակություններում միջմշակութային երկխոսությունը կենսական նշանակություն ունի ապահովելու համար բոլոր քաղաքացիների ներառումը ժողովրդավարական քննարկումների, բանավեճերի և խորհրդակցությունների մեջ:

2-րդ և 3-րդ մասերը նկարագրում են մոդելի հիմքում ընկած որոշ ենթադրությունների նախադրյալները: 2-րդ մասը նկարագրում է այն ենթադրությունը, որ թեպետ ժողովրդավարության մշակույթում արդյունավետ մասնակցություն ունենալու համար քաղաքացիներին անհրաժեշտ է ունենալ մի շարք իրավասություններ, այս

իրավասությունները բավարար չեն նման մասնակցություն ունենալու համար, քանի որ ժողովրդավարական մասնակցությունը նույնպես պահանջում է համապատասխան ինստիտուցիոնալ կառույցների առկայություն։ Այլ կերպ ասած, ինչպես իրավասությունները, այնպես էլ ժողովրդավարական հաստատությունները էական նշանակություն ունեն ժողովրդավարության մշակույթ հաստատելու համար։ Բացի այդ, հասարակության բոլոր անդամների ժողովրդավարական մասնակցությունը պահանջում է սոցիալական անհավասարության և կառուցվածքային թերությունների դեմ պայքարի միջոցներ։ Նման միջոցների բացակայության դեպքում անապահով խմբերի անդամները կմեկուսացվեն ժողովրդավարական գործընթացներից՝ որքան էլ որ լինի ժողովրդավարական իրավասության նրանց մակարդակը։

3-րդ մասը պարզաբանում է <<մշակույթ>> հասկացությունը, որը ենթադրվում է իրավասության մոդել ասելիս։ Բոլոր մշակույթներն իրենց ներսում բազմատարր են, վիճարկելի, դինամիկ և անընդհատ զարգացող, և բոլոր մարդիկ ապրում են բազմաթիվ մշակույթներում, որոնք բարդ եղանակներով փոխազդում են իրար։ <<Միջմշակութային>> հայեցակարգը նույնպես դիտարկվում է այս մասում։ Առաջարկվում է այն մոտեցումը, որ միջմշակութային իրավիճակներ առաջանում են, երբ որևէ անհատ մեկ այլ անձի կամ խմբի ընկալում է որպես իրենից մշակութապես տարբեր։ Այդ իսկ պատճառով միջմշակութային երկխոսությունը սահմանվում է որպես անհատների կամ խմբերի միջև տեղ գտնող երկխոսություն, ովքեր իրենք իրենց ընկալում են որպես մեկը մյուսից տարբեր մշակութային պատկանելիություն ունեցողներ։ Նշվում է, որ թեպետ միջմշակութային երկխոսությունը չափազանց կարևոր է բազմամշակույթ հասարակություններում հանդուրժողականությունը խթանելու և սոցիալական համախմբվածությունն ավելացնելու համար, որոշ դեպքերում նման երկխոսությունը կարող է չափազանց պատասխանատու և դժվարին լինել։

Այնուհետև 4-րդ մասը պարզաբանում է <<իրավասություն>> հասկացությունը, որն օգտագործվում է մոդելում։ Ժողովրդավարական և միջմշակութային իրավասությունը սահմանվում է որպես համապատասխան արժեքների, վերաբերմունքի, հմտությունների, գիտելիքների և/կամ հասկացողությունների մոբիլիզացման և կիրառման ունակություն, որպեսզի համարժեք և արդյունավետ կերպով արձագանքի այն պահանջներին, մարտահրավերներին և հնարավորություններին, որոնք առկա են ժողովրդավարական և միջմշակութային իրավիճակներում։ Իրավասությունը դիտարկվում է որպես դինամիկ գործընթաց, որտեղ որևէ իրավասու անհատ մոբիլիզացնում և կիրառում

է հոգեբանական ռեսուրսների ամբողջությունն ակտիվ և հարմար ձևով՝ առաջ եկած նոր հանգամանքներին արձագանքելու համար:

4-րդ մասը պարզաբանում է նաև, թե ինչպես ի հավելումս <<իրավասու>> տերմինի (եզակի թվով) նման գլոբալ և համապարփակ կիրառման, <<իրավասություններ>> տերմինը (հոգնակի թվով) սույն փաստաթղթում կիրառվում է հղում անելով հատուկ անհատական ռեսուրսներին (այսինքն՝ հատուկ արժեքներին, վերաբերմունքին, հմտություններին, գիտելիքներին և հասկացողություններին), որոնք մոբիլիզացվում և կիրառվում են վերածվելով իրավասու վարքագծի: Այլ կերպ ասած, այս համատեքստում իրավասությունը բաղկացած է իրավասությունների ընտրությունից, ակտիվացումից և կազմակերպումից և կոնկրետ իրավիճակներում այդ իրավասությունների կիրառումից՝ համակարգված, դինամիկ և հարմարեցված ձևով:

5-րդ մասում նկարագրված է այն աշխատանքային մեթոդը, որի միջոցով որոշում են հատուկ իրավասությունները՝ սույն մոդելում դրանք ընդգրկելու համար: Այս մոդելի ուշագրավ առանձնահատկությունն այն է, որ այն չի մշակվել զրոյից: Ի հակառակ դրան, այն հիմնված է գոյություն ունեցող ժողովրդավարական իրավասության և միջմշակութային իրավասության հայեցակարգային սխեմաների համակարգված վերլուծությունների վրա: Իրականացված վերստուգումը բացահայտել է նման 101 սխեմաներ: Այս 101 սխեմաները վերլուծվել են բացահայտելու համար նրանց մեջ պարունակվող բոլոր անհատական իրավասությունները, այնուհետև այդ իրավասությունները խմբավորվել են ըստ համանման հատկությունների: Դա հանգեցրեց 55 հնարավոր իրավասությունների բացահայտման՝ մոդելում դրանք ընդգրկելու համար: Այս իրավասությունների ցանկը առավել կառավարելի և գործնական չափերի հասցնելու գործին նպաստելու համար կիրառվեց սկզբունքային չափանիշների և պրագմատիկ նկատառումների մի հավաքածու, որպեսզի որոշվեն այն առանցքային իրավասությունները, որոնք պետք է ընդգրկվեին այս մոդելում: Այս չափանիշների և նկատառումների կիրառումը հանգեցրեց 20 իրավասությունների բացահայտման՝ մոդելում ընդգրկելու համար ներառյալ արժեքների 3 խումբ, 6 տեսակի վերաբերմունք, 8 հմտություններ, և գիտելիքների և քննադատական ընկալման 3 շարք: Այս իրավասություններն օգտագործվել են մոդելը ստեղծելու համար: Այնուհետև կազմվել է այս մոդելը նկարագրող փաստաթղթի նախագիծը, որը շրջանառության մեջ է դրվել միջազգային խորհրդակցություններում՝ ներառելով գիտական փորձագետներին, կրթության բնագավառի պրակտիկ աշխատողներին և քաղաքականություն մշակողներին: Այդ խորհրդակցություններից ստացած արձագանքները լիովին հավանություն են տվել մոդելին, բայց նաև իրենց հերթին պարունակել

մի շարք օգտակար առաջարկություններ: Նման հետադարձ կապն օգնել է ճշտելու մանրամասները և առաջնորդվելու այդ արձագանքներով սույն փաստաթուղթը կազմելիս:

**Գծապատկեր 1 ԺՄԻ մոդելի մեջ ներառված 20 իրավասությունները**

6 - րդ մասը նկարագրում է ստացված մոդելն ամբողջությամբ, թվարկելով և նկարագրելով բոլոր հատուկ արժեքները, մոտեցումները, հմտությունները, գիտելիքները և քննադատական ընկալումը, ինչը անհատին հնարավորություն է տալիս արդյունավետ և համապատասխան կերպով իր մասնակցությունն ունենալ ժողովրդավարության մշակույթում: Այս մոդելն ամփոփ կերպով ներկայացված է վերը տրված գծապատկեր 1-ում, իսկ այդ 20 իրավասությունների ամբողջական ցուցակը, յուրաքանչյուր իրավասության համառոտ նկարագրությամբ, նշված է ստորև տրված շրջանակում:

7-րդ մասը եզրափակում է փաստաթուղթը սույն մոդելի համար երկու հույս հայտնելով. որ այն օգտակար կլինի կրթության ոլորտում որոշումների կայացման և պլանավորման համար և, որ այն կնպաստի երիտասարդների իրավունքների և հնարավորությունների ընդլայնմանը, որպես ինքնուրույն սոցիալական սուբյեկտներ, ընտրելու և հետամուտ

լինելու կյանքում իրենց ընտրած սեփական նպատակներին՝ ժողովրդավարական հաստատությունների կողմից սահմանված և մարդու իրավունքների հանդեպ հարգանքի շրջանակներում:

A հավելվածը (անգլերեն տեքստի) տալիս է այն 101 իրավասության սխեմաների աղբյուրների ցանկը, որոնք վերստուգվել են նախագծի շրջանակներում: B հավելվածը տալիս է այն 55 հնարավոր իրավասությունների ցանկը, որոնք որոշվել են ըստ այդ 101 սխեմաների: C հավելվածում տրվում են որոշ առաջարկություններ հետագա ընթերցման համար՝ ի հավելումս A հավելվածում նշված հղումների:

## Իրավասությունների համառոտ ցանկը, որը հնարավորություն է տալիս անհատին արդյունավետ և համապատասխան մասնակցություն ունենալ ժողովրդավարության մշակույթում

### Արժեքներ

#### Արժևորել մարդկային արժանապատվությունը և մարդու իրավունքները

Այս արժեքը հիմված է այն ընդհանուր համոզմունքի վրա, որ յուրաքանչյուր անձ ունի հավասար արժեք, հավասար արժանապատվություն, ունի հավասար հարգանքի իրավունք և իրավունք ունի օգտվելու մարդու իրավունքների և հիմարար ազատությունների նույն փաթեթից և պետք է արժանանա համապատասխան վերաբերմունքի:

#### Արժևորել մշակութային բազմազանությունը

Այս արժեքը հիմված է այն ընդհանուր համոզմունքի վրա, որ այլ մշակութային պատկանելիությունը, մշակութային փոփոխականությունն ու բազմազանությունը, և տեսակետների, հայացքների և գործելակերպի բազմակարծությունը պետք է դրականորեն ընկալվեն, գնահատվեն և ողջունվեն:

#### Արժևորել ժողովրդավարությունը, արդարադատությունը, արդարությունը, հավասարությունը և օրենքի գերակայությունը

Արժեքների այս շարքը հիմված է այն ընդհանուր համոզմունքի վրա, որ հասարակությունները պետք է գործեն և կառավարվեն ժողովրդավարական գործընթացների շրջանակում, որտեղ հարգվում են արդարադատության, արդարության, հավասարության և օրենքի գերակայության սկզբունքները:

## Մոտեցումներ

### Անկանխակալ մոտեցում այլ մշակույթների, համոզմունքների, աշխարհայացքների և սովորույթների նկատմամբ

Անկանխակալ մոտեցումը՝ դա վերաբերմունքն է այն մարդկանց նկատմամբ, ում մշակութային պատկանելիությունը, համոզմունքները, աշխարհայացքն ու սովորույթները տարբերվում են քո սեփականից: Դա ներառում է զգայուն, հետաքրքրասիրական և բարյացակամ վերաբերմունք այլ մարդկանց և այլ աշխարհայացքների նկատմամբ:

### Հարգանք

Հարգանքը կայանում է որևիցե մեկի կամ որևիցե մի բանի նկատմամբ դրական վերաբերմունք և արժևորող վարք ցուցաբերելու մեջ, հիմնված այն դատողության վրա, որ նրանք ունեն իրական կարևորություն, արժեք և նշանակություն: Հարգանք ունենալ այլ մարդկանց հանդեպ, ովքեր տարբեր կերպ են ընկալում մշակութային պատկանելիությունը կամ ունեն քո սեփականից տարբերվող համոզմունքներ, կարծիքներ և սովորույթներ, կենսական նշանակություն ունի միջմշակութային արդյունավետ երկխոսության և ժողովրդավարության մշակույթի համար:

### Քաղաքացիական մտածողություն

Քաղաքացիական մտածողությունը՝ դա վերաբերմունքն է այն համայնքի կամ սոցիալական խմբի հանդեպ, որին անձը պատկանում է և որն ավելի լայն է, քան նրա ընտանիքի և ընկերների անմիջական շրջապատը: Այն իր մեջ ներառում է այդ համայնքին պատկանելու զգացողությունը, համայնքի այլ անդամների մասին իրազեկվածությունը, այդ մարդկանց վրա սեփական գործողությունների թողած հետևանքների գիտակցումը, միասնությունը նրանց հետ և համայնքի նկատմամբ ունեցած քաղաքացիական պարտքի զգացումը:

### Պատասխանատվություն

Պատասխանատվությունը՝ դա վերաբերմունքն է սեփական գործողությունների նկատմամբ: Այն ներառում է՝ խորհուն լինել գործողություններ կատարելիս, մտադրված լինել գործելու միայն բարոյական նորմերին համապատասխան, բարեխղճորեն կատարել

դրանք և պատասխանատվություն զգալ այդ գործողությունների հետևանքների համար:

### Ինքնակառավարման արդյունավետություն

Ինքնակառավարման արդյունավետությունը՝ դա վերաբերմունքն է ինքդ քո նկատմամբ: Այն ներառում է դրական համոզմունքի առկայությունը սեփական ունակության նկատմամբ կատարել ճիշտ գործողություններ, որոնք պահանջվում են որոշակի նպատակների հասնելու համար և վստահություն, որ կարող ես հասկանալ խնդիրները, ընտրել համապատասխան մեթոդներ առաջադրանքներն իրագործելու համար, հաջողությամբ հաղթահարել խոչընդոտները և ինչ-որ բան փոխել աշխարհում:

### Հանդուրժողականություն անորոշ իրավիճակների նկատմամբ

Հանդուրժողականությունը անորոշ իրավիճակների նկատմամբ՝ դա վերաբերմունքն է այնպիսի իրավիճակների հանդեպ, որոնք անորոշ են և ենթակա բազմաթիվ հակամետ բացատրությունների: Այն ներառում է նմանատիպ իրավիճակների դրական գնահատում և կառուցողական մոտեցում նրանց հանդեպ:

## Հմտություններ

### Ինքնուրույն ուսուցման հմտություններ

Ինքնուրույն ուսուցման հմտությունները դրանք այն հմտություններն են, որ պահանջվում են իրականացնելու, կազմակերպելու և գնահատելու համար սեփական ուսուցումը սեփական կարիքների համաձայն, ինքնուրույն կերպով, առանց ուրիշների կողմից դրդման:

### Վերլուծական և քննադատական մտածողության հմտություններ

Վերլուծական և քննադատական հմտությունները դրանք այն հմտություններն են, որ պահանջվում են վերլուծելու, գնահատելու և դատողություններ անելու համար ցանկացած թեմայով (օրինակ՝ տեքստերի, փաստարկների, մեկնաբանությունների, խնդիրների, իրադարձությունների, փորձառությունների և այլն ) համակարգված և տրամաբանական ձևով:

## Լսելու և դիտարկելու հմտություններ

Լսելու և դիտարկելու հմտությունները դրանք այն հմտություններն են, որ պահանջվում են նկատելու և հասկանալու համար այն, թե ինչ է ասվում և ինչպես է ասվում, և նկատելու և հասկանալու համար ուրիշների անխոս վարքը:

## Կարեկցանք

Կարեկցանքը՝ դա հմտությունների մի շարք է, որը պահանջվում է հասկանալու և կիսելու այլ մարդկանց մտքերը, համոզմունքներն ու զգացմունքները և նայելու աշխարհին այլ մարդկանց աչքերով:

## Ճկունություն և հարմարվողականություն

Ճկունությունը և հարմարվողականությունը դրանք այն հմտություններն են, որ պահանջվում են կարգավորելու և վերահսկելու համար մտքերը, զգացմունքները և վարքն այնպես, որ հնարավոր լինի արդյունավետ և համապատասխան-- կերպով արձագանքելու նոր միջավայրին և իրավիճակներին:

## Լեզվական, հաղորդակցական և բազմալեզու հմտություններ

Լեզվական, հաղորդակցական և բազմալեզու հմտությունները դրանք այն հմտություններն են, որ պահանջվում են արդյունավետ և համապատասխան կերպով շփվելու մարդկանց հետ, ովքեր խոսում են նույն կամ օտար լեզվով և հանդես գալ որպես միջնորդ տարբեր լեզուներով խոսող մարդկանց միջև:

## Համագործակցելու հմտություններ

Համագործակցելու հմտությունները դրանք այն հմտություններն են, որ պահանջվում են ուրիշների հետ հաջողությամբ մասնակցելու համատեղ գործունեության, աշխատանքների և նախաձեռնությունների մեջ և խրախուսել ուրիշներին համագործակցելու այնպես, որ հնարավոր լինի հասնելու խմբակային նպատակներին:

## Հակամարտությունների կարգավորման հմտություններ

Հակամարտությունների կարգավորման հմտությունները դրանք այն հմտություններն են, որ պահանջվում են անդրադառնալու, կառավարելու և լուծելու հակամարտությունները խաղաղ

ճանապարհով՝ հակամարտող կողմերին ուղղորդելով դեպի լավագույն լուծումներ, որոնք ընդունելի կլինեն բոլոր կողմերի համար:

## Գիտելիքներ և քննադատական ընկալում

### Ինքնաճանաչողություն և ինքնաքննադատական ընկալում

Սա ներառում է սեփական մտքերի, համոզմունքների, զգացմունքների և դրդապատճառների, ինչպես նաև սեփական մշակութային պատկանելիության և աշխարհայացքի իմացություն և ինքնաքննադատական ընկալում:

### Լեզվի և հաղորդակցման միջոցների իմացություն և քննադատական ընկալում

Սա ներառում է սոցիալապես համապատասխան բանավոր և ոչ բանավոր հաղորդակցման սովորույթների, որոնք գործում են լեզվում (ներում) և որով մարդը խոսում է, իմացություն և քննադատական ընկալում, ինչպես նաև այն հետևանքների, որ մարդկանց վրա կարող են ունենալ շփման տարբեր ոճերը ու թե ինչպես է յուրաքանչյուր լեզու արտահայտում մշակութային ընդհանուր իմաստներ ինքնատիպ ձևերով:

### Գիտելիքներ և աշխարհի քննադատական ընկալում

Սա ներառում է գիտելիքների և քննադատական ընկալման մի ընդարձակ և բարդ համալիր տարբեր ոլորտներում, ներառյալ քաղաքականությունը, օրենսդրությունը, մարդու իրավունքները, մշակույթը, մշակույթները, կրոնը, պատմությունը, լրատվամիջոցները, տնտեսությունը, շրջակա միջավայրը և կայուն զարգացման բնագավառը:

Ժամանակակից հասարակությունները՝ Եվրոպայում դիմակայում են բազմաթիվ մարտահրավերների, ներառյալ՝ ընտրություններում ընտրողների մասնակցության մակարդակի նվազումը, քաղաքական գործիչների հանդեպ ավելացող անվստահությունը, ատելության հողի վրա կատարվող հանցագործությունների բարձր մակարդակը, անհանդուրժողականությունը և նախապաշարմունքը էթնիկ փոքրամասնությունների և կրոնական խմբերի հանդեպ և բռնի ծայրահեղականությանը ցուցաբերվող աջակցության մակարդակի աճը: Այս մարտահրավերները սպառնում են ժողովրդավարական հաստատությունների օրինականությանը և Եվրոպայում խաղաղ գոյակցությանը:

Ֆորմալ կրթությունը կարող է կենսական գործիք հանդիսանալ այս մարտահրավերների դեմ մղվող պայքարում: Կրթական համապատասխան որակն ու գործելակերպը կարող են խթանել ժողովրդավարական ներգրավվածությունը, նվազեցնել անհանդուրժողականությունը և նախապաշարմունքը և իջեցնել բռնի ծայրահեղականությանը ցուցաբերվող աջակցությունը: Սակայն այս նպատակներին հասնելու համար կրթության ոլորտի մասնագետները կարիք ունեն ժողովրդավարական իրավասությունների հստակ ընկալման, ինչին պետք է նպատակաուղղված լինի ուսումնական ծրագիրը:

Եվրոպայի խորհուրդը պատրաստել է իրավասությունների մի նոր հայեցակարգային մոդել, որն անհրաժեշտ է քաղաքացիների համար մասնակցելու ժողովրդավարական մշակույթում և խաղաղ ապրելու ուրիշների հետ մշակութապես տարբեր հասարակություններում: Այս մոդելը երկու տարվա քրտնաջան աշխատանքի արդյունք է և մեծ հավանության է արժանացել միջազգային խորհրդակցությունների մասնակից՝ կրթության բնագավառի առաջատար փորձագետների կողմից: Այն հայեցակարգային ամուր հիմք է ապահովում Ժողովրդավարական քաղաքացիության և մարդու իրավունքների կրթության ուսումնական ծրագրերի, մանկավարժական մեթոդաբանության և գնահատման հետագա զարգացման համար: Դրա կիրառումը հնարավորություն կտա կրթական համակարգերին արդյունավետ կերպով նախապատրաստել ուսանողներին հետագայում դառնալու շահագրգիռ և հանդուրժող քաղաքացիներ:

Այս թերթիկը պարունակում է Ժողովրդավարական մշակույթի իրավասությունների համառոտ բովանդակությունը, որը տալիս է հնարավորություն արագ և պարզ կերով ստանալ տեղեկատվություն այս թեմայի շուրջ: Ամբողջական տեքստը հասանելի է Եվրոպայի խորհրդի հրատարակությունում ISRN 978-92-871-8237-1:

**www.coe.int/education**

PREMS 202116

HYE

**www.coe.int**

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 47 պետություններ, որոնցից 28-ը միաժամանակ նաև Եվրոպական միության անդամներ են: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը նպատակաուղղված միջազգային համաձայնագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE